

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/4

14 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ 31.03.2015 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 23.03.2015 թ-ի թիվ 5101050 ակտի դեմ:

«Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

2015 թ-ի մարտի 6-ից ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության աշխատակիցների կողմից «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում՝ համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարի կողմից տրված թիվ 5101050 հանձնարարագրի:

23.03.2015 թ-ին ստացվել է ստուգման ակտը՝ համաձայն որի ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված վարձու աշխատողներից թվով 9 (ինը) աշխատակիցների հետ աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէ, բացակայում են ինը գրավոր աշխատանքային պայմանագրերը և աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանները: Ինչպես նաև, թվով մեկ վարձու աշխատող՝ Հայկազ Վարյանը, աշխատել է 2015 թ-ի փետրվարի 1-ից, սակայն աշխատանքային պայմանագիր է կնքվել 02.03.2015 թ-ին, այսինքն՝ մինչև պայմանագիր կնքելը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցում չի ստացել: Արդյունքում ընկերությունը համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի տուգանվել է 6.000.000 դրամի չափով:

Հարկ է նշել, որ ստուգում իրականացնող խմբի կողմից նշված ինը անձանցից մեկի՝ Արփինե Միքայելյանի հետ աշխատանքային պայմանագիր կնքված եղել է, ինչը փաստել է նաև ստուգումն իրականացնող խումբն իր 12.03.2015 թ-ի գրությամբ, սակայն աշխատանքային պայմանագրի ընկերության օրինակը թյուրիմացաբար ստորագրված չի եղել տնօրենի կողմից, ինչը դիտվել է որպես պայմանագիր չկնքելուն հավասարագոր, չնայած որ ընկերության կնիքը դրված է եղել: Արփինե Միքայելյանը աշխատանքի ընդունման դիմում է գրել 16.02.2015 թ-ին, դիմումը մակագրվել է նույն օրը տնօրենի կողմից, և նույն օրը նրա հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր, ինչպես նաև 16.02.2015 թ-ին ուղարկվել է Արփինե Միքայելյանի վերաբերյալ վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտը (այսուհետ Հայտ):

Ստուգում իրականացնող խմբի կողմից թույլ է տրվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի խախտում:

Այն, որ «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ի և Արփինե Միքայելյանի միջև աշխատանքային պայմանագիր կնքված է եղել, այսինքն՝ ընկերությունը բովանդակային առումով կատարել է օրենքով սահմանված իր պարտականությունները, ապացուցվում է 16.02.2015 թ-ին ներկայացված Հայտով: Բացի այդ, ստուգումն իրականացնող խումբը կարող էր Արփինե Միքայելյանից պահանջել և ստանար պայմանագրի նրա օրինակը և հավաստիանար, որ խախտում առկա չէ:

Հայկազ Վարյանը «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ում սկսել է աշխատել 02.03.2009 թ-ից մինչև 01.11.2013 թ-ը, որից հետո իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից և մեկնել ՌԴ աշխատելու: 2015 թ-ի փետրվարի վերջին նա դիմել է

ընկերությանը աշխատանքի համար և 02.03.2015 թ-ին նրա հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր և նույն օրն անցել է աշխատանքի: Իսկ ստուգումն իրականացնող խումբը, մասնավորապես՝ գլխավոր հարկային տեսուչ Հ.Եսայանը 06.03.2015 թ-ին կազմած արձանագրությամբ փաստել է, որ նա «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ում փաստացի սկսել է աշխատել 01.02.2015 թ-ից, սակայն աշխատանքային պայմանագիր նրա հետ կնքվել է 02.03.2015 թ-ին:

06.03.2015 թ-ին կազմված արձանագրության ուսումնասիրությունից պարզ երևում է, որ չգիտես ինչու Հայկազ Վարյանի վերաբերյալ տվյալները լրացնելիս, Հ.Եսայանի կողմից ջնջում է կատարվել հենց այն հատվածում, որտեղ լրացրել է, թե երբվանից է սկսել աշխատել Հայկազ Վարյանը՝ նշելով, որ իբրև Հայկազ Վարյանը «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ում սկսել է աշխատել 01.02.2015 թ-ից:

Ի պատասխան ստուգումն իրականացնող խմբի 12.03.2015 թ-ի հարցման՝ 13.03.2015 թ-ին ընկերությունը հայտնել է, որ Հայկազ Վարյանը «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ում աշխատում է 02.03.2015 թ-ից, և կից ուղարկվել է Հայկազ Վարյանի բացատրությունները, թե ինչու է նա ստուգումն իրականացնող խմբին հայտնել 01.02.2015 թ-ից փաստացի աշխատելու մասին, այն դեպքում, երբ նա փաստացի աշխատանքը սկսել է 02.03.2015 թ-ից:

Հայկազ Վարյանն իր բացատրություններում նշել է, որ ստուգումն իրականացնող խմբին նման բան չի հայտնել, ավելին նա նկատել է, որ սխալ է լրացվել և զգուշացրել է այդ մասին, ցույց է տվել աշխատանքային պայմանագրի իր օրինակը, սակայն ստուգումն իրականացնող խումբն այդպես էլ ոչինչ չի փոխել արձանագրության մեջ:

Նաիրա Բաղդասարյանը, Անի Համայակյանը և Ժաննա Միքայելյանը խնդրել էին 10-15 օր պրակտիկա անցնել դեղատանը, սակայն ստուգումն իրականացնող խմբի կողմից նրանք նույնպես դիտվել են որպես այսպես ասած չգրանցված աշխատողներ, չնայած, որ անտրամաբանական է փոքր դեղատանը 6 դեղագործ ունենալ:

Բանվորներ Արման Գևորգյանը, Հովհաննես Բաբայանը, Արտակ Վարդանյանը, Նահապետ Սարիբեկյանը և Հակոբ Պետրոսյանը չեն հանդիսանում «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ի աշխատողներ: Աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով ընկերությունում աշխատող բանվորները չէին հասցնում բեռնաթափել բեռնարկղերը (թվով երկու հատ), իսկ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ընկերությունը վճարում է տուգանքներ յուրաքանչյուր բեռնարկղի համար 100 ԱԱՆ դոլարին համարժեք դրամ: Այդ պատճառով շուկայից վարձվել վերը նշված բանվորները՝ բեռնարկղերը բեռնաթափելու համար: Այդ աշխատանքները տևել են 4-5 ժամ: Նրանք դեռ չէին էլ սկսել աշխատանքները, երբ եկել են ստուգումն իրականացնող անձինք:

«Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ն գտնում է, որ ստուգման անցկացման և խախտումների հայտնաբերման ու արձանագրման ընթացքում ստուգումն իրականացնող հարկային մարմնի կողմից անտեսվել և խախտվել են ՀՀ օրենսդրության պահանջները, ընկերության իրավունքներն ու օրինական շահերը:

Աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստ արձանագրելու կարգը և արձանագրության ձևը սահմանված են ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշմամբ (այսուհետ Որոշում):

Որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու համար ստուգումն իրականացնող անձինք իրականացնում են հետևյալ քայլերը՝ ...

Որոշման 4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 2-րդ ենթակետում նշված ցանկում ներառված անձանց բացատրում են հայտարարություն տալուց հրաժարվելու նրանց իրավունքների մասին և նրանց համաձայնությամբ վերցնում են հայտարարություն որտեղ նշվում են՝

ա. հայտարարություն տվող անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները.

բ. հայտարարություն տվող անձի կողմից իրականացվող աշխատանքային գործառույթների հակիրճ նկարագրությունը.

գ. տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը:

Ստուգումն իրականացնող հարկային մարմնի կողմից չեն պահպանվել Որոշմամբ սահմանված Կարգը, մասնավորապես՝ Որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետում նախատեսված ցանկում ընդգրկված անձանց չի բացատրվել հայտարարություն տալուց հրաժարվելու նրանց իրավունքի մասին, ինչպես նաև հայտարարություն, որպես այդպիսին, չի վերցվել:

Ստուգումն իրականացնող անձանց կողմից կազմվել է ստուգման պահին փաստացի աշխատող անձանց վերաբերյալ արձանագրություններ, որտեղ նշվել են այդ անձանց անունը, ազգանունը, բնակության հասցեները, հեռախոսահամարները, որոշ դեպքերում նաև, թե որտեղ են աշխատում: Անգամ այդ տվյալները լրացված են կամայականորեն, քանի որ բազմաթիվ աշխատողների տվյալներ լրացված են կիսատ, իսկ անձը հաստատող փաստաթղթի, այդ անձանց աշխատանքային պարտականությունների հակիրճ նկարագրության մասին ընդհանրապես տեղեկություններ հիշյալ արձանագրությունների մեջ չկան:

Վերոգրյալի հիման վրա կարելի է փաստել, որ ստուգումն իրականացնող հարկային աշխատողների կողմից չեն պահպանվել Որոշմամբ սահմանված արձանագրության պարտադիր ձևը:

Որոշման 4-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով ներկայացված հայտարարությանը ստուգման արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից կազմվող աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստի վերաբերյալ կազմվող Որոշման 2-րդ հավելվածով սահմանված արձանագրության անբաժանելի մասն է:

Որոշման տրամաբանությունից կարելի է հասկանալ, որ հայտարարությունը հանդիսանում է հիմք, խախտում արձանագրելու համար: Այդ դեպքում անհասկանալի է, ինչպես է ստուգում իրականացնող խումբը աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստի արձանագրություն կազմել:

Որոշման 5-րդ կետի համաձայն՝ արձանագրության մեջ պարտադիր նշվում են սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցանկում ընդգրկված անձի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, նրա կողմից կատարվող աշխատանքային պարտականությունների բնույթը: Սակայն ստուգումն իրականացնող անձանց կողմից կրկին անգամ չեն պահպանվել 25.07.2013 թ-ի ՀՀ կառավարության Որոշմամբ սահմանված պարտադիր պահանջները:

Այսպիսով, ստուգում իրականացրած անձինք խախտել են «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ կետերի պահանջները, ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված ստուգումների անցկացման և արձանագրման կարգը:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել 23.05.2015 թ-ի թիվ 5101050 ակտի 1-ին կետը:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը»

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ֆինանսների նախարարի 26.02.2015 թ-ի թիվ 5101050 հանձնարարագրի համաձայն «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 23.03.2015 թ-ի թիվ 5101050 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 6.000.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեությամբ զբաղված վարձու աշխատողներից թվով 9 (ինը) աշխատակիցների՝ Հակոբ Պետրոսյանի (բանվոր), Արման Գևորգյանի (բանվոր), Հովհաննես Բաբայանի (բանվոր), Արտակ Վարդանյանի (բանվոր), Նահապետ Սարիբեկյանի (բանվոր), Նաիրա Բաղդասարյանի (դեղագործ), Անի Համայակյանի (դեղատան աշխատող), Ժաննա Ենոքյանի (դեղագործ) և Արփինե Միքայելյանի (հսկիչ վաճառող) հետ աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէր, բացակայում էին գրավոր աշխատանքային պայմանագրերը և աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանները: Ինչպես նաև, թվով մեկ վարձու աշխատող՝ Հայկազ Վարյանը, աշխատել է 2015 թ-ի փետրվարի 1-ից, սակայն նրա հետ աշխատանքային պայմանագիր է կնքվել 02.03.2015 թ-ին, այսինքն՝ մինչև պայմանագիր կնքելը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցում չի ստացել: Վերը նշված փաստը հայտնաբերվել է ընկերության վարձու աշխատողներից վերցված բացատրությունների և գրավոր աշխատանքային պայմանագրերի (հրամանների) համադրման արդյունքում:

Խախտվել է ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 14-րդ հոդվածի պահանջները, որի համար կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 6.000.000 դրամի չափով:

Տվյալ դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված կարգով 06.03.2015 թ-ին կազմվել են արձանագրություններ, որոնցում արտացոլվել են ստուգման պահին փաստացի աշխատող անձանց տվյալները:

Այնուհետև, ստուգող անձինք պահանջել են ներկայացնել 06.03.2015 թ-ի դրությամբ «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ում աշխատող աշխատակիցների ցուցակը:

Ստուգող անձանց ներկայացվել է «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ում 06.03.2015 թ-ի դրությամբ աշխատող բոլոր աշխատակիցների ցուցակը, որը ստորագրված է ընկերության գլխավոր հաշվապահի և կադրերի գծով պատասխանատու անձի կողմից, ինչպես նաև կնքված է ընկերության կնիքով: Ընդ որում, ցուցակի վերջում կատարված է գրառում, որ բացի վերը նշված թվով 112 աշխատակիցներից այլ աշխատանքային պայմանագրեր, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտեր և քաղաքացիաիրավական պայմանագրեր առկա չեն:

«Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ում 06.03.2015 թ-ի դրությամբ աշխատող աշխատակիցների ցուցակում և վերոգրյալ արձանագրություններում արտացոլված տվյալների համադրման արդյունքում պարզվել է, որ թվով 9 (ինը) աշխատակիցների (որոնց տվյալները նշված են Ակտում) հետ աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէ, իսկ թվով մեկ վարձու աշխատող՝ Հայկազ

Վարյանը, ընկերությունում փաստացի աշխատել է 2015 թ-ի փետրվարի 1-ից, սակայն նրա հետ աշխատանքային պայմանագիր է կնքվել 02.03.2015 թ-ին:

Արփինե Միքայելյանի վերաբերյալ Ակտով արձանագրված խախտման կապակցությամբ նշվեց հետևյալը:

Ստուգումն իրականացնող անձինք «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ի և Արփինե Միքայելյանի միջև 16.02.2015 թ-ին կնքված աշխատանքային պայմանագրի (ընկերությունում գտնվող օրինակի) ուսումնասիրության արդյունքում պարզել են, որ այն չի համապատասխանում ՀՀ աշխատանքային օրենսգրքով գրավոր կնքվող աշխատանքային պայմանագրին ներկայացվող պահանջներին: Մասնավորապես, պայմանագրում ընկերության տնօրենի ստորագրությունն առկա չի եղել: Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել Արփինե Միքայելյանի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված դիտարկելու համար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Արմեն-Համիկ եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ի և Արփինե Միքայելյանի միջև 16.02.2015 թ-ին կնքված գրավոր աշխատանքային պայմանագրը, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով, որի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են, գտնում է, որ ըստ էության, պայմանագիրը բավարարում է ՀՀ օրենսդրությամբ գրավոր կնքվող աշխատանքային պայմանագրին ներկայացվող պահանջներին, քանի որ այն կնքված է ընկերության կնիքով:

Ընկերության բողոքում Հայկազ Վարյանի վերաբերյալ բերված պնդումների կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

Ստուգումն իրականացնող անձանց կողմից 06.03.2015 թ-ին ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշմամբ հաստատված կարգով ստուգման պահին փաստացի աշխատանքային գործունեություն իրականացնող Հայկազ Վարյանի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն, որը համադրվել է ընկերության կողմից տրամադրված՝ ընկերության և Հայկազ Վարյանի միջև 02.03.2015 թ-ին կնքված աշխատանքային պայմանագրի հետ: Արդյունքում պարզվել է, որ նա աշխատել է 2015 թ-ի փետրվարի 1-ից, սակայն աշխատանքային պայմանագիրը կնքվել է 02.03.2015 թ-ին:

Քննարկվող դեպքում խախտումն արձանագրելու համար հիմք է հանդիսացել Հայկազ Վարյանի կողմից տրված հայտարարությունն այն մասին, որ նա ընկերությունում փաստացի աշխատում է 01.02.2015 թ-ից: Նշված փաստը Հայկազ Վարյանը հաստատել է 06.03.2015 թ-ի արձանագրությունում իր կողմից դրված ստորագրությամբ: Ինչ վերաբերվում է բողոքում բերված այն պնդումներին, որ 06.03.2015 թ-ի արձանագրությունում Հայկազ Վարյանի վերաբերյալ տվյալները լրացնելիս Հ.Եսայանի կողմից ջնջում է կատարվել այն հատվածում, որտեղ նշված է ընկերությունում նրա փաստացի աշխատելու ամսաթիվը, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

Տվյալ դեպքում 06.03.2015 թ-ին կազմված արձանագրությունում Հայկազ Վարյանի վերաբերյալ տվյալները լրացվել են ոչ թե գլխավոր հարկային տեսուչ Հ.Եսայանի, այլ՝ հարկային տեսուչ Գ.Միքայելյանի կողմից: Բացի այդ, Գ.Միքայելյանը պնդեց, որ նշված արձանագրությունում իր կողմից որևէ ջնջում չի կատարվել, պարզապես Հայկազ Վարյանի ընկերությունում փաստացի աշխատելու ամսաթվի վերաբերյալ առաջին անգամ կատարված գրառումը հստակ չերևալու հետևանքով, այն մեկ անգամ ևս ընդգծվել է:

Ընկերության բողոքում բերված պնդումների վերաբերյալ, որ Նաիրա Բաղդասարյանը, Անի Համայակյանը և Ժաննա Միքայելյանը խնդրել էին 10-15 օր

պրակտիկա անցնել դեղատանը, սակայն ստուգումն իրականացնող խմբի կողմից նրանք նույնպես դիտվել են որպես չգրանցված աշխատողներ, հարկ է նշել հետևյալը:

«ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն. «Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու համար ստուգում իրականացնող անձինք իրականացնում են հետևյալ քայլերը՝

2) կազմում են ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած այն անձանց ցանկը, որոնց մասով գործատուն չի ներկայացնում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր՝ բացառությամբ՝

ա. գործատուի մոտ ուսումնական, արտադրական կամ գիտահետազոտական պրակտիկա անցնող ուսանողների կամ գործատուի մոտ վերապատրաստվող անձանց, եթե գործատուի մոտ առկա է նշված փաստը հիմնավորող ապացույց (գործատուի և ուսումնական հաստատության միջև գրավոր պայմանագիր, ուսումնական հաստատության կողմից գործատուի մոտ գործուղված՝ պրակտիկա անցնող ուսանողների կամ վերապատրաստում անցնող անձանց ցանկ)»:

Քննարկվող դեպքում ստուգումն իրականացնող անձինք ընկերության տնօրենին հասցեագրված 12.03.2015 թ-ի և 13.03.2015 թ-ի գրություններով պահանջել են ներկայացնել բացատրություն Նաիրա Բաղդասարյանին, Անի Համայակյանին և Ժաննա Միքայելյանին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու պատճառների վերաբերյալ, ներկայացնել նրանց անձնագրային տվյալները, իսկ նշված անձանց ընկերությունում որպես ուսումնական պրակտիկայում գտնվողների դիտարկելու դեպքում ներկայացնել նաև համապատասխան ուսումնական հաստատությունների հետ կնքված պայմանագրերը: Սակայն ընկերության տնօրենի կողմից գրավոր պատասխանվել է, որ Նաիրա Բաղդասարյանի, Անի Համայակյանի և Ժաննա Միքայելյանի վերաբերյալ ընկերության և ուսումնական հաստատությունների միջև կնքված գրավոր պայմանագրեր առկա չեն, հետևապես նրանց վերաբերյալ պահանջվող տեղեկությունները չեն կարող տրամադրվել:

Ինչ վերաբերվում է Ակտով թվով հինգ վարձու աշխատողների՝ Հակոբ Պետրոսյանի (բանվոր), Արման Գևորգյանի (բանվոր), Հովհաննես Բաբայանի (բանվոր), Արտակ Վարդանյանի (բանվոր), Նահապետ Սարիբեկյանի (բանվոր) աշխատանքի ընդունումն ընկերության կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելուն, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

Ստուգումն իրականացնող անձանց կողմից 06.03.2015 թ-ին ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշմամբ հաստատված կարգով ստուգման պահին փաստացի աշխատանքային գործունեություն իրականացնող վերոգրյալ անձանց վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ, որոնք համադրվել են ընկերության կողմից տրամադրված աշխատանքային պայմանագրերի (անհատական իրավական ակտերի, քաղաքացիաիրավական պայմանագրերի) հետ: Արդյունքում պարզվել է, որ վերը նշված թվով հինգ վարձու աշխատողները (այսուհետ՝ բանվորներ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չեն: Այնուհետև, ստուգումն իրականացնող անձինք 12.03.2015 թ-ի և 13.03.2015 թ-ի գրություններով ընկերության տնօրենից պահանջել են ներկայացնել բացատրություն՝ բանվորների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չլինելու պատճառների վերաբերյալ, ինչպես նաև

